

Երուսաղէմի մեր վանքին այս դրան ար-
ւեստով շինուած են նաեւ Կաֆայի (Ղրիմ)
դուռերը: Անոնց մասին կը խօսի Հ. Մի-
նաս վրդ. Բժշկեանց Վենետիկեան Մխի-
թարեանը, երբ կը նկարագրէ Նոր Քէֆէի
(Կաֆա) Սուրբ Սարգիս հնագարեան եկե-
ղեցին. «Արեւմտեան դուռն է երկփեղկեալ:
ընկուզի փորագրեալ խաչազարդ: Ի միում
փեղկի փորագրեալ կայ ԱՅՍ ԴՈՒՌՍ Է ՍԲ
ՏԱՃԱՐԻ, ՈՐ Է ՅԱՆՈՒՆ ՍԲ ՍԱՐԳՍԻ
ԶԱՒՐԱ Եւ ի միւսումն ՅԻՇ. ԱՐԴԵԱՆՅ
ԹՈՐՈՍԻՍ. ՅԻՇԱՏԱԿ ԻԻՐ ԵՒ ԻԻՐ ԶԱՐ-
ՄԻ. Ի ԹՎԻՍ ԶՀԹ(1530): Ուր կողմնակի
փորագրեալ է մանրադիր յիշատակարան. ի
միւսումն (փեղկի) ...ՏՐ ՄԱՄԻԿՈՆԵԱՆՅ
Ի ԹՎԻՆ ՊԺԵ(1366) ՄԱՐՏԻ ԻԸ(28): Իսկ
դիր միւս փեղկին եղծեալ զի հազիւ որոշե-
ցաք այսչափ. ՄԱԿԵԴՈ...ԱՃԱ...ՄԱՐ-
ԴՈՅ: Աջակողմեան առաջին դուռն տաճա-
րին է նորաչին. տեսաք զհին դուռն փո-
խորդեալ յեկեղեցի Հրեշտակապետին: Իսկ
երկրորդ դուռն է նոյնպէս խաչազարդ քան-
դակեալ հանդերձ յիշատակագրաւ: ԱՐԴ-
ԵԱՄԲԲ ԿԻՐ ԱԼԷՔՍԻՆ ՅԻՇԱՏԱԿ ԻԻՐ ԵՒ
ԾՆՈՂԱՅ ԻԻՐՈՅ: Ի վերայ միւս փեղկին
գրեալ է: ԱՂՍ ԴՐԱՆ ՍՐԲՈՅ ՍԱՐԳՍԻ
ԶԱՒՐԱՎԱՐԻՆ ԵՂԵԻ...»(3):

Բարերազգ զուգարկալութեամբ վերջերս
Երեւան հրատարակուած հատորի մը
մէջ(4) կար յաջող մէկ արասահունութիւնը

վերոյիշեալ 1530 եւ 1366 թուականով դը-
րան: Մենք ալ անկէ աննելով հոս կ'ար-
տատակենք (նկար թիւ 30): Հրատարակուած
լուսանկարէն որոշ կը տեսնենք որ այս
դուռը կազմուած է ԵՐԿՈՒ դուռերու մա-
սերէ: Նկարին մէջ ձախ փեղկին ձախ մասը
եւ աջ դրան աջ մասը որոշ կերպով վերէն
փառ կը տատկանին մէկ դուռի, որուն յի-
շատակարանը Հայր Բժշկեանց մեղի կու
տայ: ԱՅՍ ԴՈՒՌՍ Է ՍԲ ՏԱՃԱՐԻ, ՈՐ Է
ՅԱՆՈՒՆ ՍԲ ՍԱՐԳՍԻ ԶԱՒՐԱ(վարի), իսկ
աջ մասը՝ ՅԻՇ. ԱՐԴԵԱՆՅ ԹՈՐՈՍԻՍ. ՅԻ-
ՇԱՏԱԿ ԻԻՐ ԵՒ ԻԻՐ ԶԱՐՄԻ. Ի ԹՎԻՍ
ԶՀԹ(1530): Առանց տարակոյս ունենալու
փաստակաւոր հօր՝ արձանագրութիւնը
անսխալ կարգալու հասուն կարողութեան
վրայ, միայն կը համարձակինք թելադրել
որ ՁՀԹ խիստ հաւանաբար պէտք է կար-
դացուի ՁՀԹ(1330): Ասիկա կը հաստատէ
նաեւ այս դրան փայտափորագրական ար-
ւեստը, որուն մասին քիչ յետոյ: Նոյն դը-
րան երկրորդ կարկտան մասը նոյնպէս ո-
րոշ կ'երեւի լուսանկարին մէջ: Մինչ վերի-
նին յիշատակարանը երկտող է, փորագրու-
ած այս երկրորդ մասին յիշատակարանը
ունի նախորդէն աւելի մանր փորագրուած
չորս տող: Այս վերջին յիշատակարանն է որ
գժուարութեամբ կարդացեր է Հայր Բժը-
կեանց սապէս. «...Տ(է)Ր ՄԱՄԻԿՈՆԵԱՆՅ
Ի ԹՎԻՆ ՊԺԵ(1366) ՄԱՐՏԻ ԻԸ(28)», միւս
փետեկն վրայ ալ՝ «ՄԱԿԵԴՈՆ...ԱՃԱ...
ՄԱՐԴՈՅ»: Հայր Բժշկեանց կը վկայէ որ
հազիւ այդքան մը որոշեր է եղծուած յիշա-
տակարանէն: Ուրեմն ընթերցումը այս 3
բառերուն խնդրական է: ՄԱԿԵԴՈՆի հա-
մար ես կ'առաջարկեմ ՄԱՄԻԿՈՆ ՄԱՄԻ-
ԿՈՆԵԱՆՅ տէրը որպէս Արղունի, որ Դսեղի
Մամիկոնեանց գերդաստանին վերջին ծա-
նօթ շառաւիղն էր: Արղուն իր կարգին որ-
դին էր Վարդանի եւ թողք Մամիկոն Մա-
միկոնեանի՝ այդ տան Դսեղեան (կոչուած
նաեւ Համազասպեան) ճիւղին. իր թոռան
որդիին հետ չչփոթուելու համար զինք կը
կոչեմ առաջին: Իրմէ է Արցախի Քոյատակ
սեղի մօտ Կոչիկ անապատի երեք տաճար-
ներէն մէջտեղիին վրայ գտնուած արձա-
նատրութիւնը ՉԺԴ(1265) թուականով: Հա-
ւանաբար ասոր թուան որդին՝ Մամիկոն
երկրորդն է որ իր գերդաստանին հետ զող-

կազմեցաւ դուռն սուրբ տաճարիս յիշտակ Տէր
Միմասին ձեռամբ Համբեցի ֆարտարապետի» (Յի-
շատակարանը կ'օրինակենք մոյն վերոյիշեալ գոր-
ծէն, էջ 1254): Տեսած եմք նկարը որ ցոյց կու տայ
սղագրութեանց պարզում: Մեր այս գործին համար
ուշ ժամանակի աշխատութիւն:

(3) «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան»: 1830, Ս. Ղազար, էջ 349:

(4) «Ղրիմի Հայկական Գաղութի Պատմութիւն»: Վ. Միխայլեւան, 1964, Երեւան, էջ 144: Յաւայի է որ չի յիշուիր քէ այժմ ո՞ւր կը պահուի այս դուռը: 1963ին Երեւան իմծի հուսատուեցաւ որ Կաֆայի դուռերը տարուած են Լեմինկրատ եւ հոն կը պահուին Հերմիդամի քանգարանը: Անշուշտ յոյս ունինք որ օր մը անոնք պիտի վերադարձուին Երեւանի քանգարանը, քանի որ ատոնք ոչ միայն ազգապատկան, այլ նաեւ եկեղեցապատկան իրեր են եւ արդար սեփականութիւնը Հայութեան: